



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

18.05.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 372-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՄԱԿԵՉԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ 34,2ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ 0,00342ՀԱ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՍԱՍՈՎ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՅԻՄԻՎ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 կետով, 35-րդ կետի դ) ենթակետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ա որոշման դրույթները, և քննության առնելով Գորիս քաղաքի բնակիչ Մայիսիկ Ավագյանի 2022 թվականի փետրվարի 7-ի թիվ 440 դիմումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Գորիս քաղաքի Մակիչի փողոցի թիվ 2/3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում, Մայիսիկ Ավագյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն գրանցված 34.2քմ արտաքին (28.7քմ ներքին) մակերեսով ավտոտնակը (վկ.03052022-09-0026)(34.2x1422=48650) քառասունութ հազար վեց հարյուր հիսուն ՀՀ դրամով և 0.00342հա մակերեսով սպասարկման հողատարածքը (34.2x1878=64250) վաթսունչորս հազար երկու հարյուր հիսուն ՀՀ դրամով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Մայիսիկ Ավագյանի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:



ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ